ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիս, 2024 թվականի № 48-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, հիմք ընդունելով Հանրային հեռարձակողի խորհրդի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի № 52-Լ որոշման հավելված 1-ով սահմանված «Հանրային հեռարձակողի գործադիր տնօրենի թափուր տեղի համալրման համար մրցույթի անցկացման» կարգի 3-րդ, 4-րդ և 9-րդ կետերը և հաշվի առնելով «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն) գործադիր տնօրենի թափուր պաշտոնի առկայությունը՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար հայտարարել մրցույթ։
2. Հաստատել Ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար անցկացվող մրցույթի հայտարարության տեքստը համաձայն սույն որոշման հավելված 1-ի և այն սույն որոշման ընդունմանը հաջորդող 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել Հանրային հեռարձակողի խորհրդի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

3. Սահմանել Ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար անցկացվող մրցույթի մասնակիցներին ներկայացվող պահանջները և մրցույթին մասնակցելու համար ներկայացվող փաստաթղթերի ցանկը՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ով հաստատված հայտարարության տեքստի:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

27 հունիս, 2024 թվականի

ք. Երևան